



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«2» մայիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-37/16 բողոքը քննող  
հանձնաժողովին

## Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Կամպարե» ՍՊԸ-ի 15.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

### 1. «Կամպարե» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Կամպարե» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 15.04.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-16/54» ծածկագրով մրցույթին և հայտ է ներկայացրել հրավերով սահմանված աշխատանքների կատարման վերաբերյալ: Ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը հայտարարված հրավերով ճանաչվել է ամենացածր գնային առաջարկ ներկայացրած Ընկերություն: Ընկերությունից պահանջվել է ներկայացնել մրցույթի երկրորդ փուլին վերաբերող փաստաթղթերը և ցածր գին ներկայացնելու վերաբերյալ հիմնավորում:



Սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը և լրացուցիչ հիմնավորումները: Ընկերության հաշվապահի կողմից 30.03.2016թ. էլեկտրոնային տարբերակով ուղարկվել է ոչ ճիշտ հաշվետվություն ընկերության պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքի վերաբերյալ: Դրանից հետո Պատվիրատուն 31.03.2016թ. հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը վերոնշյալ հաշվետվության վերաբերյալ և ստացել է հրավերի պայմաններին չհամապատասխանելու մասին պատասխան: Այնուհետև, Ընկերության կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչությանն ուղարկվել է Ընկերության պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքի ուղղված, ճշգրիտ տարբերակը:

Ընկերությունը դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով կատարել կրկնակի հարցում՝ մատնանշելով, որ տեղի է ունեցել հաշվարկների տեխնիկական սխալ, որից հետո կատարվել է ուղղում, սակայն Պատվիրատուն հրաժարվել է կատարել պահանջվող հարցումը՝ ճշտելու ընկերության իրական, ճիշտ տվյալները:

Դրանից հետո հարկային տեսչության կողմից 05.04.2016թ. տրված գրությունը, Ընկերության ճշտագրված ակտիվների և պարտավորությունների մասին, համաձայն որի Ընկերության հաշվապահական հաշվեկշռային արժեքը համապատասխանում է հրավերի պայմաններին, ներկայացվել է Երևանի քաղաքապետարանին, սակայն, Պատվիրատուն հարկային մարմնի կողմից Ընկերությանը տրամադրած նշված տեղեկանքը չի ընդունել՝ պատճառաբանելով, որ դա իրենց համար հիմք չէ:

Ընկերությունը, բողոքում մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետը, 5-րդ կետը, 31-րդ հոդվածի 5-րդ կետը, նշել է, որ Ընկերությունն ունի հրավերով սահմանված գնումներին մասնակցելու իրավունքը և համապատասխանում է որակավորման չափանիշներին, ինչպես նաև ներկայացված պահանջներին համապատասխան ներկայացվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Տվյալ դեպքում, գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, դրսևորել է խտրական վերաբերմունք Ընկերության նկատմամբ՝ սխալ գնահատելով ներկայացված փաստաթղթի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին՝ կայացրել է անօրինական որոշում, անտեսելով այն փաստը, որ Ընկերության պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը



համապատասխանում է հրավերի պայմաններին, ինչի ուժով բացակայում է Ընկերության հայտը մերժելու հիմքը:

Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ մասի 1-ին կետը, խնդրել է.

կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/54 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2016թ. կայացրած որոշումը՝ «Կամպարե» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ,

դադարեցնել ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/54 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2016թ. կայացրած որոշումը՝ «Կամպարե» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 21.04.2016թ. ժամը 17:30-ին ԳԲԽ-37/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Կամպարե» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հայտնեցին, որ Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը, խնդիրն առաջացել է այն պատճառով, որ Ընկերության հաշվապահը սխալ հաշվետվություն է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն, ինչն արդեն շտկվել է:

## **2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը**

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ներկայացված բողոքի վերաբերյալ գրավոր կարծիք չի հայտնել:

Երևանի քաղաքապետարանը պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 21.04.2016թ. ժամը 17:30-ին ԳԲԽ-37/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած հանձնաժողովի նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

## **3. ԳԲԽ-37/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-37/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝



1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի հենապատերի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/54» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կամպարե» ՍՊԸ-ն:

2. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի հենապատերի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/54» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի 2.3 կետի համաձայն՝

«Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական փորձառություն,
- 2) տեխնիկական միջոցներ,
- 3) ֆինանսական միջոցներ,
- 4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում Մասնակցի՝

(...)

**«Ֆինանսական միջոցներ»** չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ղեզդիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (**Հավելված 3.3**) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

(...)

**բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.**

(...)

4) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:» (...):

3. «Կամպարե» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 07.03.2016թ. ներկայացրած հայտի թիվ 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.



4. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 31.03.2016թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել եզրակացություն «Կամպարե» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. ՀՀ ֆինանսների նախարարության ՏՏԵՆԶ վարչության 02.04.2016թ. եզրակացության համաձայն՝ «Կամպարե» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմում է՝ 25,464,955 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 20,080,094 ՀՀ դրամ:

6. «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-16/54» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Գնահատող հանձնաժողով) կողմից 04.04.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Կամպարե» ՍՊԸ-ի հայտը՝ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցելու հիմնավորմամբ:

7. Ընկերությունը 05.04.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչությանը՝ խնդրելով տրամադրել Ընկերության ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն:

8. ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչության 05.04.2016թ. թիվ 173-74 գրության համաձայն՝ 03.04.2016թ. ՀՏ ներկայացված 2015թ. շահութահարկի ճշտված հաշվարկի 6-րդ աղյուսակի համաձայն կազմակերպության ընդամենը ակտիվները կազմել են **26,080,094 դրամ**, ընդամենը պարտավորությունները՝ **25,464,955 դրամ**:

#### **4. ԳԲԽ-37/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Կամպարե» ՍՊԸ-ի 15.04.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի հենապատերի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-16/54» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝



Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետև նաև՝ Կարգ), ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչության 05.04.2016թ. թիվ 173-74 գրությունը, գտնում է, որ «Կամպարե» ՍՊԸ-ի 15.04.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նույն Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝



«Մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

(...)

**բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.**

(...)

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 04.04.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Կամպարե» ՍՊԸ-ի հայտը՝ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցելու հիմնավորմամբ:

Ընկերությունը 15.04.2016թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընկերության հաշվապահի կողմից 30.03.2016թ. էլեկտրոնային տարբերակով Ընկերության պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքի վերաբերյալ ուղարկվել է ոչ ճիշտ հաշվետվություն, ինչի արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրվել է հրավերի պայմաններին չհամապատասխանելու մասին եզրակացություն, սակայն հետագայում հաշվետվության ճշգրիտ տարբերակն ուղարկվելուց հետո ստացվել է հարկային տեսչության կողմից 05.04.2016թ. տրված գրությունը, համաձայն որի Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը համապատասխանում է հրավերի պայմաններին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչության 05.04.2016թ. թիվ 173-74 գրության համաձայն՝ 03.04.2016թ. ՀՏ ներկայացված 2015թ. շահութահարկի ճշտված հաշվարկի 6-րդ աղյուսակի համաձայն՝ կազմակերպության ակտիվները կազմել են **26,080,094 դրամ**, պարտավորությունները՝ **25,464,955 դրամ**:



Այսպիսով, ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի հարկային տեսչության 05.04.2016թ. թիվ 173-74 գրության համաձայն, Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը (ակտիվներ՝ **26,080,094 ՀՀ դրամ**, պարտավորությունները՝ 25,464,955 ՀՀ դրամ): Այսինքն, Ընկերության «Ֆինանսական միջոցներ» չափանիշը հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվեկշռային արժեքի մասով բավարարում է հրավերի պահանջներին, հետևաբար Ընկերության հայտը այս հիմքով ենթակա չէ մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Կամպարե» ՍՊԸ-ի 15.04.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի հենապատերի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-16/54» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով «Կամպարե» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝

Գնումների բողոքարկման և  
ահազանգման բաժնի վարիչ

Գնումների բողոքարկման և  
ահազանգման բաժնի առաջատար  
մասնագետ՝ ԳԲԽ-37/16 բողոքը  
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Հ.Այունց



Մ.Կատվալյան



Ա.Դավթյան